Երջանկության գաղտնիքը (*Ծածկանունը՝ A&G)*

Քայլում էր Սոսը ամայի փողոցներով՝ զգալով որքան մենակ ու անօգնական է: Վաղուց անցել էին երբեմնի քաղցր ու լավ օրերը: Քայլում էր ու մտածում՝ արդյո՞ք ճիշտ էր ապրել, արդյո՞ք ճիշտ էր վարվել, երբ քսան տարի առաջ հեռացել էր հայրենի տնից, կարծելով, թե երջանկությունը դրսում իրեն է սպասում, և մի՞թե հասել էր նա այսօր այդ երջանկությանը: Մտածում էր և գիտակցում, որ՝ ոչ: Նա հարուստ էր, բայց ոչ սիրով ու ջերմությամբ, այլ սառը փողերով, որոնք երբեք չէին ջերմացնելու իրեն, երբեք քաղցր խոսքեր չէին ասելու: Երբ նոր էր լքում հայրենիքը, կարծում էր՝ երջանկություն ասվածը հենց փողն է. երբ փող ունես ուրեմն դու ես երջանկության ու սիրո տերը, կարող ես ապրել ինչպես կուզես: Եվ միթե դրանից լավ բան կար այս կյանքում: Այո, կար, և նա այսօր ցավով գիտակցում էր դա: Գիտակցում էր, որ իր ունեցածը ոչինչ է, ինքը երջանիկ չէ: Երազում էր նորից լինել երիտասարդ, նորից սկսել կյանքը, բայց, ավա՜ղ, տարիներն անվերադարձ են: Մեր ապրած յուրաքանչյուր ակնթարթ, յուրաքանչյուր վայրկյան անհետ կորչում է: Եվ անգամ փողն ի զորու չէ վերադարձնել ժամանակը: Որքան հիմար էր, երբ կարծում էր՝ փողն ամենակարող է:

Փողը ոչինչ է սիրո դիմաց: Այն գեթ մի թղթի կտոր է, որ գուցե միայն գոյությունդ հոգալու համար է: Բայց գոյութուն ունենալ չի նշանակում ապրել: Մարդ լիարժեք ապրում է, երբ ընտանիք ունի, պարուրված է սիրով և ջերմությամբ, երբ երեխաներ ունի, և, նայելով նրանց, հասկանում է, որ իզուր չի ապրել, որ չի կորցրել իր տարիները: Ո՞վ կարող է փողով գնել մայրական սեր ու գուրգուրանք՝ ոչ ոք:

Նոր էր վերադարձել հայրենիքից: Գնացել էր մոր հուղարկավորությանը: Հայրենիքը լքելուց հետո նա մորը երբեք չէր տեսել, և հենց այդ ժամանակ էլ տեսավ վերջին անգամ: Խղճի խայթն ու սրտի ցավը խեղդում էին նրան: Ուզում էր լացել, որ փոքր ինչ թեթևանա, սակայն հույզերն այքան շատ էին, որ մեկը մյուսին չէր թողնում դուրս գալ, ազատել հոգին այդ այրող ցավից: Եվ ու՞մ է պետք իր փողը, մի՞թե կարող էր վերադարձնել մորը այդ փողերով, մի՞թե ետ կբերեր նրա քաղցր ու ժպտերես դեմքը, մի՞թե կկարողանար գնել մանկության քաղցր օրերը: Ինչու՞ նա ժամանակին չլսեց մորը, ինչու՞ ետ չկանգնեց հայրենիքը լքելու իր մտքից, ինչու՞ թողեց մորը արցունքն աչքերին և հեռացավ: Այժմ որքա՜ն շատ էր զգում նրա կարիքը: Ինչ երջանիկ էր մանուկ հասակում, երբ մայրը համբուրում էր նրան, հեքիաթներ պատմում, իր սիրով ջերմացնում ու գուրգուրում նրան: Չնայած դժվար կյանքին, երբեք իր մոտ լաց չէր լինում, չէր դժգոհում: Քանի անգամ էր մայրը սոված պառկել քնելու, քանի որ հացի իր բաժինը նրան էր տվել: Իսկ ինքը չգնահատեց այդ ամենը, թողեց նրան մենության մեջ, այն ժամանակ, երբ մայրն ամենից շատ իր կարիքն ուներ, երբ եկել էր իր հերթը խնամելու և ջերմացնելու մորը:

Ոտքերը հրաժարվում էին քայլել, այլևս անկարող էր կանգնել և, մոտենալով այգու նստարանին, նստեց: Շուրջն աշխուժություն էր տիրում. այգին լեցուն էր երիտասարդներով, երեխաներով, սիրահար զույգերով: Նայում էր շուրջն ու նախանձում երիտասարդներին: Նրանք դեռ ժամանակ ունեին փոխելու իրենց կյանքը, իսկ ինքը՝ ոչ: Նա անգամ չէր ամուսնացել, չուներ ընտանիք և երեխաներ: Ժամանակին կարծում էր՝ դեռ ապրելու շատ ժամանակ ունի, դեռ վաղ է ամուսնանալու մասին մտածել և, որ ավելի

լավ է կյանքը վայելի, օգտվի հաճույքներից: Իսկ այսօր, մենակ նստած, գիտակցում էր նաև այդ սխալը: Այսօր իր կողքին չկար սրտացավ մեկը, ով կկարեկցեր իրեն, ջերմություն կտար: Այո, ցավալի է, բայց իր բոլոր ընկերները հաճույքի ընկերներ էին:

Այգում տիրող ուրախ մթնոլորտն անգամ չէր փարատում Սոսի հոգու ցավը: Շուրջը կյանքը շարունակվում էր, երեխաները ուրախ ճիչերով այս ու այն կողմ էին վազվզում՝ ընկնելով ծաղկից ծաղիկ թռչող թիթեռնիկների հետևից, երիտասարդները կատակներ անելով և ծիծաղելով զբոսնում էին, իսկ նա կարծես այդ այգուց կտրված մի այլ աշխարհ լիներ՝ մռայլ, տխուր և մտազբաղ:

Նայում էր թիթեռնիկներին ու մտածում՝ որքան նման է մարդկային կյանքը թիթեռնիկների կյանքին: Յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր ժամ, րոպե ծնվում են բազու՞մ թիթեռնիկներ՝ մեկը մյուսից տարբեր և գեղեցիկ: Թիթեռնիկներն էլ՝ մարդկանց նման, երբեք նույնը չեն լինում: Ամեն մեկն ունի իր յուրահատկությունը՝ լինի դա լավ, թե վատ: Ինչո՞վ էր տարբերվում ինքը թիթեռնիկից, որը ծնվելով՝ լքել էր իր թրթուռը և հեռացել, ձգտելով տեսնել ավելին, հասնել ավելիին: Մի՞թե ինքն էլ նման կերպ չէր վարվել՝ թողնելով մորը մենակ: Նախկինում, նայելով թիթեռնիկներին, մտածում էր՝«խեղճ արարածներ, ինչքան կարճ է ձեր կյանքը»: Իսկ այսօր, նայելով նրանց, հասկանում էր, որ մարդկային կյանքը նույնքան կարճ և ակնթարթային է, ինչպես թիթեռնիկների կյանքը: Ինքն արդեն երկար էր ապրել, սակայն շատ բան չէր տեսել, շատ բան չէր հասցրել գնահատել և շատ բան կորցրել էր անդարձ:

Հանկարծ խաղով տարված երեխաները, առանց նկատելու, թե ինչպես, տրորեցին թիթեռնիկին և վերջինս «մահացավ»: Սոսի սիրտը տրորվեց ցավից: Նա գիտակցեց, որ ինքն էլ այս պահին մի տրորված թիթեռնիկ է, և իր կյանքն էլ այդպես պատահականորեն կարող է ավարտվել:

Մտքերով տարված՝ չէր էլ նկատել, թե ինչպես են արցունքները գլորվում այտերի վրայով: Այո, քաղցր է կյանքը և անվերադարձ: Արցունքներն անգամ չէին կարողանում մեղմել հոգու ցավը: Սիրտը հայրենիքին էր տենչում, և Սոսը որոշեց մեկնել: Գուցե հայրենիքն ու հայրական տունը կարող կլինեին մեղմելու այդ ցավը, գուցե այնտեղ կարողանար գտնել իր այդքան փափագած երջանկության թեկուզ մի փոքր մասը:

* * *

Անցել էին տարիներ: Հայրական տանը մենակ նստած՝ ընթերցում էր, որ փոքր ինչ փարատեր մենությունը: Ժամանկին ինքը մորը նույն դրության մեջ էր թողել: Մոր ինչի՞ն էր պետք իր ուղարկած գումարը, երբ ինքը մոր կողքին չէր, չէր վերադարձնում այն ջերմությունն ու հոգատարությունը, որ ժամանակին մայրն էր իրեն տվել: Կարդում էր, սակայն զգում, որ աչքերն ուղղակի սահում են գրքի վրայով՝ առանց ըմբռնելու իմաստը, քանի որ մտքերը թռչում էին հեռու, դեպի երբեմնի երիտասարդություն:

«Աստված իմ, մի՞թե կյանքն այսքան կարճ է: Ինչու է ժամանակն անդառնալի, ինչու, երբ երջանկությունը մեր կողքին է, մենք չենք նկատում, և միայն այն ժամանակ, երբ այն արդեն շատ է հեռանում, սկսում ենք տեսնել, սակայն չենք կարողանում հասնել: Ինչու՞ մարդիկ չեն գոհանում ունեցածով, ինչու՞ են կարևորում նյութականը: Այս կյանքում ավելի արժեքավոր բաներ կան, ինչու՞ ենք անտեսում դա: Ինչու՞ չենք գիտակցում, որ կյանքն ակնթարթ է, և պետք է ապրել այնպես, որ ոչ մի րոպե, ոչ մի վայրկյան դատարկ

չկորցնենք: Երանի՞ վերադարձներ մանկությունը, մորը: Երանի՞ ևս մեկ անգամ ապրելու շանս ունենար, որպեսզի կարողանար ուղղել սխալները»:

Վերհիշում էր իր ապրած կյանքը և գիտակցում, որ, չնայած ժամանակին, այն իրեն շատ երկար էր թվում, սակայն, եղել է ոչ ավել, քան քսանչորս ժամ, քան մեկ թիթեռնիկի կյանք:

Հ.Գ. ուղղվում է բոլոր այն երիտասարդներին, ովքեր լքելով հայրենիքը կարծում են, որ երջանկությունը դրսում է, պետք է գնալ երջանկության հետևից, և կարծում են, որ այդ երջանկությունը փողի մեջ է: Նայեք ձեր շուրջը, բացեք ձեր աչքերն ու լուսավորեք ձեր միտքը, որը կորել է խավարության մեջ, և կնկատեք, որ երջանկությունը ձեր կողքին է, ձեր հայրենիքում և ձեր տանը: Գնահատեք այն, ինչ ունեք, քանի որ կյանքը հավիտենական չէ:

* * *

ԿԱՆԽԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՐՏԱԳԱՂԹԸ